

Սովորական կին չէր Ռշտունեաց Տիկինը, Հագիւ քառասնամեայ՝ շատ անելի պակաս կը ցցներ. իւր կերպարանաց գեղեցկութիւնը այնպիսի փայլ չունէր, որ աչք շլացներ, այլ այն վարպետներու նկարներուն կատարելութիւնն ունէր, որ քանի նայի ոք՝ աչքը կը գրաւի, կը յափշտակէ, վայելուչ հասակը, դիմաց համեմատութիւնը, հոնից եւ աչաց հրամայող ակնարկը խառնուրդ խստութեան եւ քաղցրութեան, որք ձգող եւ տիրապետող զօրութիւն մ'ունէին, ժպիտը, որ հաճոյք կամ արհամարհանք կը յայտներ, իւր նազելի շարժումնքն ու քայուածքը, իւր մանր ձեռքերն ու ոտքերը, եւ վերջապէս բոլոր այս մարմնոյ կատարելութիւնք իւր սրամտութեան, իւր նուրբ ճաշակին հետ միացեալ կանանց ակումբի մէջ նաեւ ամեն մարդու նկատողութեան եւ ակնածութեան զինք առարկայ կ'ընէին: Ո՛ր մնաց որ Ռշտունեաց Տիկին մ'էր, եւ ամենը գիտէին թէ առանց իշխելու երկանը վրձնէ՞ն ազդեցութիւն ունէր իւր մտաւոր կարողութեանց համար եւ նորա կատարեալ վստահութիւնը: Մարգարտային վարսակալ պսակը ճակտին բեհեզեայ քօղին վրայ, փունջ մը մազերու խոպոպիք իջած այտից երկու կողմէն, սամուրենին մետաքսեայ պարեգօտին վրայէն ձգեալ, ոսկեթել մուճակներ ոտքերուն, Ռշտունեաց Տիկինը թագուհուոյ կը նմանէր իւր բազմոցին վրայ: Վստահ իւր արժանեաց եւ Թեոդորոսի սիրոյն՝ գեղեցիկ սպասուհիներէ էր շրջապատեալ. իւր բնական առատածեռնութեամբ միշտ ամենուն սիրելի էր, եւ դիտէր այնպիսի ձեւ տալ ինչայոյութեան, որ ատելին՝ խեղճ Յուսիկին վրայ կ'իյներ, թեպէտ սա էլ ամեն խոժոռ նայուածքէ չէր վիրաւորուիր:

Այսպէս յոգնած տարածեալ էր իշխանուհին իւր ծիրանի բազմոցին վրայ, երբ Յուսիկ ներս մտաւ, ողջունեց խոնարհաբար եւ հարցուց թէ ի՞նչ հրաման ունէր. Սեթայ՝ իշխանագն հիւրերուն համար սեղանի պատրաստութեանց վրայ կրկին եւ կրկին պատուերներ տալէն վերջ, որպէսզի ինչայոյութեամբ չի վարուի իւր տան վերակացուն, եւ երբ Յուսիկ թթու երեսով դուրս ելնելու կը պատրաստուէր, ըսաւ իշխանուհին

— Մոռցայ նաեւ զրուցել քեզի թէ իշխանը հրաման ունի, որ Ատոմ զօրավարն ինչքա՛ն դրամ ուզէ պէտք է տալ, դիտես իւր բնաւորութիւնը, պէտք է ջանալ քաղցրութեամբ գոհ ընել զինքն ամեն կերպով:

Յուսիկի երեսը խաւարեցաւ վայրկեան մը, քիչ մը մտածելէն վերջ, դարձեալ ժպիտ ի շրթունս՝

— Ով կարող է Ատոմի դիմադրել,— պատասխանեց,— տերը դուք էք, եթէ կ'ուզէք գանձին բանալիքները նաեւ իր առաջը դնեմ: